2.3 Իրականացնող մարմին ու իրականացման մեխանիզմներ

2.7 Հիմնականում կապահպանվեն ՊՀԱԾ 3 ծրագրի ինստիտուցիոնալ և իրականացման մեխանիզմները:

2.8 Ծրագիրը կիրականացվի Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովի (ՊԿՀԲՀ) առաջնորդությամբ, որը գործում է դեռևս ՊՀԱԾ 1-ի ժամանակից և կշարունակի ծառայել որպես ծրագրի կառավարման կամ ծրագիրը համակարգող խորհուրդ: ՊԿՀԲՀ գլխավորելու է փոխվարչապետը կամ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, ով նաև Ծրագրի տնօրենն է: ՊԿՀԲՀ անդամների թվում կլինեն վարչապետի և փոխվարչապետի գրասենյակի բարձրաստիճան պաշտոնյաներ, ծրագրում անմիջականորեն ներգրավված տարբեր նախարարություններ և Ծրագրի ղեկավարը: ՊԿՀԲՀ քաղաքական աջակցություն և ռազմավարական ուղղություն ցույց կտա ծրագրի աշխատանքների, ՖԿ և գնումների այլ կարևոր փաստաթղթերի համար, կապահովի, որ պետական բյուջեում ծրագրի համար համարժեք մասհանումներ կատարվեն, կլուծի միջգերատեսչական համակարգման հարցերը

և կօժանդակի բարեփոխումների համար աջակցության ձևավորմանն ու դիմադրության հաղթահարմանը:

2.9 Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքները կիրականացվեն փոքր ԾԿԽ-ի կողմից, որը գլխավորում է Ծրագրի ղեկավարը, ով էլ զեկուցելու է Ծրագրի տնօրենին (փոխվարչապետին կամ վարչապետի աշխատակազմի ղեկավարին): ԾԿԽ կօգնի ՎԳ-ին՝ պատասխանատու լինելով. 1) ծրագրի իրականացմանը տեխնիկական և վարչական օժանդակության, 2) ՖԿ, 2) գնումների, 3) բնապահպանական և սոցիալական երաշխիքների պահանջներին կատարման, 4) Մ և Գ, 5) գնումների փաստաթղթերի տեխնիկական պահանջների և մասնագրերի մշակմանն օժանդակության/ուղղություն ցույց տալու համար՝ ծրագրի շահագրգիռ կողմերի ներկայացրած կարծիքների հիման վրա և 6) ծրագրի աշխատանքները իրականացնող մարմիններին խորհրդատվական ծառայությունների համար: ԷԿԵՆԳ-ը պատասխանատու կլինի ԾԿԽ-ին և շահառու սուբյեկտներին ՏՀՏ հեռ առնչվող բոլոր գնումների (տեխնիկա, ծրագրակազմ և համակարգեր) տեխնիկական առաջադրանքների և մասնագրերի ձևավորմանն օժանդակելու համար: ԷԿԵՆԳ-ը կօժանդակի/խորհուրդներ կտա ՏՀՏ պայմանագրերի շրջանակում ապահովվող բոլոր արդյունքների ընդունման վերաբերյալ: ԷԿԵՆԳ-ը հանդես կգա նաև որպես հայտերը գնահատող հանձնաժողովների անդամ:

2.10 Ծրագրի ղեկավարը կներգրավվի ՊԿՀԲՀ-ի և կֆինանսավորվի ծրագրի կողմից: Վարչապետի գրասենյակը ԾԿԽ-ին գրասենյակային տարածք կտրամադրի, և ծրագիրը կհոգա դրա գործառնական ծախսերը: ԾԿԽ աշխատակիցների կազմում կլինեն ծրագրի իրականացման վրա լրիվ կամ կես դրույքով աշխատող վարձված խորհրդատուներ: Ծրագրի ղեկավարից բացի, ՊՀԱԾ 3-ի շրջանակում ներկա աշխատակազմը ներառում է մեկ գնումների մասնագետ, կես դրույքով աշխատող ՖԿ մասնագետ և հաշվապահ/լրիվ դրույքով ՖԿ (ՖԿ և հաշվապահի պարտականություններով): ՊՀԱԾ 4-ի համար լրացուցիչ կավելացվի գնումների օգնականի և ՏՀՏ մասնագետի պաշտոնը:

2.11 Մի շարք մասնագիտացված մարմիններ կմասնակցեն ծրագրի իրականացմանը՝ որպես պատվիրատու/շահառու: Նրանց դերը կլինի ծրագրի միջոցով ֆինանսավորվող համակարգերի կամ մյուս աշխատանքների համար տեխնիկական պահանջների և մասնագրերի ապահովումը, խորհրդատուների կամ մատակարարների արդյունքների ուսումնասիրումը, ՏՏ ծրագրակազմի և տեխնիկայի ընդունման համար փորձարկման կազմակերպումը և դրանց համապատասխանող ծրագրի անմիջական արդյունքների օգտագործումը: Այս մարմինները ծրագրի միջոցներն ուղղակիորեն չեն կառավարի. ՖԿ և գնումների գործառույթները կիրականացվեն ԾԿԽ-ի կողմից: Սակայն նրանք հաշվետու կլինեն իրենց համապատասխան միջոցառումներից ակնկալվող արդյունքների համար՝ բացի այդ միջոցառումների ֆինանսավորման ստացումից բարեփոխումների նպատակների համար պատասխանատվության ապահովումը:

2.4 Մինչ այժմ ՊՀԱԾ 4-ի շրջանակում իրականացված՝ շահագրգիռ կողմերի ներգրավման նախնական աշխատանքները

2.12 ԾԿԽ-ը տարբեր շահագրգիռ կողմերի հետ գործակցել է ծրագրի հերթական մշակման նախորդ փուլերում: Քանի որ բազաթիվ աշխատանքների իրականացումը շարունակվելու է ՊՀԱԾ 4-ում, շահագրգիռ կողմերը հիմնականում նույնն են մնալու՝ հաղորդակցության արդեն հաստատված ուղիներով: Սա ներառում է քաղաքացիներից հետադարձ կապի ստացման հարթակը, որը մշակվել էր ծրագրի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ապահովման համար կարծիքների ստացման հնարավորություն ընձեռելու համար: Հարթակը դյուրացնում է քաղաքացիների հետ երկխոսությունը՝ նրանց համար ապահովելով հաղորդակցության արդյունավետ և հարմարավետ ուղի: Քաղաքացիներից հանրային ծառայությունների վերաբերյալ հետադարձ կապի ստացման միասնական համակարգը և հեռախոսագանգերի կենտրոնը քաղաքացիների ներգրավվածության և ծառայություն մատուցողների հաշվետվողականության ուժեղացման կարևոր գործիքներ են:

2.13 ՊՀԱԾ 4 ծրագիրը մշակելիս՝ ԾԿԽ-ն հեռավար և դեմ առ դեմ խորհրդակցական հանդիպումներ է ունեցել գործընթացում ներգրավված տարբեր շահագրգիռ խմբերի, այդ թվում՝ Վարչապետի գրասենյակի, փոխվարչապետի գրասենյակի, Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ), Քաղաքացիական ծառայության գրասենյակի (ՔԾԳ), Արդարադատության նախարարության (ԱՆ), Ֆինանսների նախարարության (ՖՆ), Արտաքին գործերի նախարարության (ԱԳՆ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ), Էլ.կառավարման ենթակառուցվածքների ներդրման գործակալության (ԷԿԵՆԳ), Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և համապատասխան այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ: ՊՀԱԾ4 առաջարկվող ծրագրի շրջանակը ուրվագծվել է Կառավարության տարբեր գործընկերների և հնարավոր շահառուների հետ կայացած հանդիպումներից հետո:

3. Շահագրգիռ կողմերի բացահայտում և վերլուծություն

3.1 Հիմնական սահմանումներ

3.1 Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը ծրագրին ներառում է Ծրագիրն իրականացնողների կողմից նախաձեռնվելիք աշխատանքները՝ ծրագրի նախապատրաստման և իրականացման ողջ ընթացքում բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից մասնակցությունն ապահովելու համար: Այն նախատեսված է տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում ծրագրի ներառականությունն ու թափանցիկությունը բարձրացնելու համար:

3.2 Ծրագրի շահագրգիռ կողմ են համարվում անհատները, ֆորմալ կամ ոչ ֆորմալ խմբերը և կազմակերպությունները և/կամ պետական կառավարման մարմինները, որոնց շահերը կամ իրավունքները ծրագրի ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը կկրեն, ինչպես դրական, այնպես էլ բացասական, ովքեր կարող են ծրագրի իրականացմամբ հետաքրքրվածություն ունենալ և ովքեր որևէ ձևով ծրագրի վերջնարդյունքների վրա ազդելու ներուժ ունեն:

3.3 Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական շրջանակի, շահագրգիռ կողմերի ներգրավման և տեղեկատվության հրապարակման վերաբերյալ բնապահպանական

և սոցիալական 10-րդ ստանդարտի (ԲՄՍ) համաձայն՝ շահագրգիռ կողմերը կարող են բաժանվել հետևյալ խմբերի.

3.3.1 ազդակիր կողմեր. այս մարդիկ, խմբերը և այլ մարմինները գտնվում են ծրագրի ազդեցության գոտում (ԾԱԳ), ուղղակի ազդեցություն կրելով, փաստացի կամ հավանական, ծրագրի ազդակիր կողմերին կարելի է նշել, որպես ծրագրին առնչվող փոփոխությանն առավել ենթակա: Անհրաժեշտ է, որ այս կողմերը սերտ ներգրավվեն ազդեցությունների և դրանց նշանակության վեր հանմանը և մեղմման և կառավարման միջոցառումների վերաբերյալ որոշումների կայացմանը:

3.3.2 այլ շահագրգիռ կողմեր. այս մարդիկ, խմբերը և այլ մարմինները կարող են ծրագրի ուղղակի ազդեցություններ չկրել, սակայն ուլքեր համարում կամ պատկերացնում են, որ իրենց շահերը ծրագրի ազդեցությունն են կրում կամ կարող են ծրագրի վրա և դրա իրականացման գործընթացի վրա ինչ-որ ձևով ազդել:

3.3.3 խոցելի խմբեր. Այս մարդիկ կարող են ծրագրի անհամաչափ ազդեցությունը կրել կամ էլ ավելի անբարենպաստ վիճակում հայտնվել՝ համեմատած որևէ այլ խմբի հետ, պայմանավորված իրենց խոցելի կարգավիճակով: Խոցելի խմբերի համար կարող են ներգրավվածության հատուկ ջանքեր պահանջվել՝ ծրագրի հետ առնչվող որոշումների կայացման շուրջ խորհրդակցությանը հավասար ներկայացվածություն ապահովելու համար:

3.4 Ծրագիրը բազմաթիվ շահագրգիռ կողմեր ունի՝ պետական կառավարման տարբեր մարմիններից, հավանական խորհրդատուներից, քաղաքացիական հասարակությունից, ՏՏ համայնքից և ընդհանուր հասարակությունից: Սույն ՇԿՆԾ (SEP) փաստաթղթի նպատակով շահագրգիռ կողմերը, որ հավանական է ուղղակիորեն քաղաքականության ազդակիրը լինեն կամ դրա իրականացմանը ներգրավված լինեն, դասակարգվում են հետևյալ ձևով.

3.4.1 Ազդակիր կողմեր. Նախարարությունները և պետական կառավարման մարմինները, որոնք առնչվում են ծրագրի հետ և ծրագրի շահագրգիռ մարմին /ազդակիր կողմ են, սակայն չեն սահմանափակվում ԱՆ-ով, նորաստեղծ ՆԳՆ-ով, Ազգային արխիվով և այլն: Տեղական համայնքները, համայնքապետարանները, դատարանները ևս ծրագրի շահագրգիռ կողմերն են: Թվային ծառայություններից օգտվող բոլոր քաղաքացիները կամ հավանական օգտվողները, քաղաքացիական ծառայության աշխատողները և դիմողները, ինչպես նաև սփյուռքի ներկայացուցիչները ևս ծրագրի ազդակիր կողմերն են:

3.4.2 Այլ շահագրգիռ կողմերն են նրանք, որ ծրագրի ուղիղ ազդեցությունները չեն կրում: Այդ խմբերում ներառված են մյուս պետական հաստատությունները, որոնք ծրագրի իրականացմանը տարբեր ձևերով կարող են ներգրավված լինել, ՏՏ համայնքը (օր. կարող է ներառել «Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը» (ՁԻՀ), Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԱՏՁՄ), Երևանի ՏՀՏ գործատուների միությունը, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ), «Իմփաթեթ հաբ Երևան»-ը և այլն),

հնարավոր խորհրդատուները (օր.՝ ՏՏ ընկերություններ, սկսնակ ընկերություններ, Մ և Գ խորհրդատվական ընկերություն և այլն), երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր.՝ ՄԱԿ-ը՝ Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի (SDG lab) միջոցով, ԱՄՆՄԶԳ կողմից համայնքների միավորման և քաղաքացիների ներգրավման գործընթացներին օժանդակությունը Հայաստանում, ՄԱԶԾ կողմից աջակցությունը կառավարությանը՝ բաց կառավարման օրակարգի առաջ մղման համար, ԵՄ աջակցությունը դատական բարեփոխումներին, հաստատությունների հզորացմանը և Հայաստանում լավ կառավարմանը և այլն), լրատվամիջոցները, քաղ.հասարակության կազմակերպությունները (օր.՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում», «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա», Առևտրի և արդյունաբերության ազգային և տարածաշրջանային պալատներ և այլն) և ընդհանուր հասարակությունը:

3.4.3 Խոցելի խմբեր: Ըստ իր սահմանման՝ ծրագիրը բացասաբար չի ազդի որևէ անապահով խմբի վրա: Սակայն հնարավոր սոցիալական ռիսկերը վերաբերում են մատուցվող և/կամ ծրագրի օժանդակությամբ կատարելագործվող թվային ծառայությունների ներառականությանը: Ծրագրի հավանական խոցելի և անապահով անձինք կարող են ներառել խմբերի/մարդկանց, ովքեր չեն կարող լիարժեք օգտագործել ծրագրով նախատեսված էլ.ծառայությունները: Այդ խմբերում/մարդկանց մեջ կարող են լինել տարեցներ, ովքեր արդի տեխնոլոգիաներ չեն օգտագործում կամ նրանց համար դրանք սահմանափակ հասանելի են, հաշմանդամություն և սահմանափակ շարժունակություն ունեցող անձինք, գյուղերում, հեռավոր վայրերում բնակվող անձինք, ազգային փոքրամասնությունները, ովքեր չեն տիրապետում ազգային լեզվին, միգրանտներն ու տեղահանվածները, ովքեր սահմանափակ սոցիալական ցանցերի միջոցով կարող են դժվարանալ ծրագրի օգուտների վերաբերյալ տեղեկությունների ստացման հարցում կամ արագագործ համացանցին չմիացված անձինք և տնային տնտեսությունները և /կամ թվային ծառայություններից օգտվելու անհրաժեշտ հմտություններ չունեցողները: Ծրագիրն այս ռիսկերը կմեղմի ներառական խորհրդակցությունների նախաձեռնմամբ և թվային ծառայությունների և հմտությունների վերաբերյալ ուսուցման և հեռավար և գյուղական վայրեր ընդլայնելու հնարավորություն տալով՝ ծրագրերի օգուտներից օգտվելու ավելի լայն և ներառական հնարավորություն ապահովելով :

Աղյուսակ 1. Հիմնական շահագրգիռ կողմերն ըստ ծրագրի բաղադրիչների և ենթաբաղադրիչների

Բաղադրիչներ	Ենթաբաղադրիչներ	Թիրախային շահագրգիռ կողմեր	Այլ շահագրգիռ կողմեր
<u>Բաղադրիչ 1.Պետական կառավարման արդիականացում</u>	<u>Ենթաբաղադրիչ 1.1</u> : <u>Քաղաքացիական ծառայության արդիականացում</u>	<ul style="list-style-type: none"> ▪ ԱՆ և նորաստեղծ ՆԳՆ քաղաքացիական ծառայությունները ▪ Քաղաքացիական ծառայության գրասենյակը 	<ul style="list-style-type: none"> ▪ Պետական կառավարման բոլոր մյուս մարմինները և քաղաքացիական ծառայողները (և դինոդները)՝ քաղաքացիական ծառայության արդիականացման պայմանով ▪ Բաղադրիչի իրականացման համար ներգրավվող խորհրդատուները ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալություններ (օր՝ ԵՄ-ի օժանդակությունը Հայաստանում լավ կառավարմանը) ▪ Լրատվամիջոցները ▪ Ընդհանուր հասարակությունը
	<u>Ենթաբաղադրիչ 1.2</u> <u>Էլեկտրոնային արդարադատություն և դատական համակարգեր</u>	<ul style="list-style-type: none"> ▪ Ազգային արխիվը և դրա աշխատակազմը ▪ Հայաստանի դատարանները ▪ ԱՆ ▪ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը ▪ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը 	<ul style="list-style-type: none"> ▪ Դատարանից և ազգային արխիվից օգտվողները ▪ Ազգային արխիվից, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության կամ պետական ռեգիստրի տվյալներից օգտվող այլ պետական կառավարման մարմինները ▪ Քննչական մարմինները, դատախազությունը, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարման ծառայությունները ԲԾՀ-ները և միությունները (օր՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա, «Հայաստանի Հելսինկյան կոմիտե», «Թրենսփերենսի Ինթերնեյշնլ» և այլն) ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր՝ ԵՄ աջակցությունը Հայաստանում լավ կառավարմանը) ▪ Ընդհանուր հասարակությունը

Բաղադրիչներ	Ենթաբաղադրիչներ	Թիրախային կողմեր շահագրգիռ	Այլ շահագրգիռ կողմեր
	<u>1.3. ՆԳՆ-ում կարողությունների զարգացում</u>	<ul style="list-style-type: none"> ▪ Նորաստեղծ ՆԳՆ և դրա աշխատակազմը ▪ ՆԳՆ միգրացիայի և անձնագրային ծառայությունը ▪ ՏԿԵՆ ▪ ՀՀ ոստիկանությունը և ԱԱԾ 	<ul style="list-style-type: none"> ▪ Պետական կառավարման այլ մարմինները ▪ Ընդհանուր հասարակությունը ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր՝ ԵՄ-ի օժանդակությունը Հայաստանում լավ կառավարմանը)
Բաղադրիչ 2. Թվային ծառայությունների մատուցում	<u>Ենթաբաղադրիչ 2.1. Կենտրոնական կառավարության՝ հարկային և մարսային վարչարարության համակարգերի թվային հանրային ծառայությունների մատուցում</u>	<ul style="list-style-type: none"> ▪ Ֆինանսների նախարարությունը ▪ ՊԵԿ-ը ▪ Հարկ և մաքսային վճարներ վճարողները 	<ul style="list-style-type: none"> ▪ Ապագա հարկ վճարողները և ընդհանուր հասարակությունը ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր.ՎՋԵԲ-ը՝ Երևանում Գործարարության աջակցման գրասենյակի միջոցով) ▪ Տեղական քաղ.հասարակության կազմակերպությունները (օր՝ ազգային և տարածաշրջանային առևտրի և արդյունաբերության պալատները «Քաղաքացիների, հարկ վճարողների, բիզնեսի իրավունքների պաշտպանություն» ՀԿ, «Մանթաշով» գործարարների միությունը, «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ և այլն)
	<u>Ենթաբաղադրիչ 2.2. Կենտրոնական կառավարության կողմից թվային պետական ծառայությունների մատուցում այլ կենտրոնական մարմիններ</u>	<ul style="list-style-type: none"> ▪ Պետական ծառայություններից օգտվողները ▪ Սեռով պայմանավորված բռնության/ընտանեկան բռնության գոհերը ▪ Ձեռնարկությունները 	<ul style="list-style-type: none"> ▪ Սեռով պայմանավորված բռնության գործերով զբաղվող քաղ. հասարակության կազմակերպությունները (օր՝ Սոցիալական աշխատողների ազգային ասոցիացիան (ՄԱԱԱ)) ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր՝ երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Վորլդ Վիժըն Արմինիա»-ն) ▪ Լրատվամիջոցները
	<u>Ենթաբաղադրիչ 2.3. Տեղական ինքնակառավարման մարմինների</u>	<ul style="list-style-type: none"> ▪ Տեղական ինքնակառավարման մարմինները և տեղական համայնքները 	<ul style="list-style-type: none"> ▪ Համայնքահենք կազմակերպությունները և քաղ. հասարակության կազմակերպությունները

Բաղադրիչներ	Ենթաբաղադրիչներ	Թիրախային կողմեր	Այլ շահագրգիռ կողմեր
	<i>կողմից թվային պետական ծառայությունների մատուցում</i>	<ul style="list-style-type: none"> ▪ Տեղերում պետական ծառայություններից օգտվողները/ ընդհանուր հասարակությունը ▪ Տեղական համայնքների ղեկավարները 	<p>(Հայաստանի համայնքների միություն, Համայնքների ֆինանսիստների միավորում և այլն.)</p> <ul style="list-style-type: none"> ▪ Երկկողմ և բազմակողմ գործակալությունները (օր.՝ ԱՄՆՄԶԳ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (EPF), ԳՄՀԸ (GIZ)) ▪ Լրատվամիջոցները ▪ Ծրագրի իրականացմանը ներգրավվող խորհրդատուները
Բաղադրիչ 3: Եվրոկառավարում և թվային ենթակառուցվածք	<p><i>Ենթաբաղադրիչ 3.1. Հիրիդային ամպ</i></p> <p><i>Ենթաբաղադրիչ 3.2. Կիրառական գույություն</i></p> <p><i>Ենթաբաղադրիչ 3.3. Տվյալագիտությունը, մեքենայական ուսուցումը և արհեստական բանականությունը կառավարման տեխնոլոգիաներում (GovTech)</i></p>	<ul style="list-style-type: none"> ▪ ՀՀ կառավարությունը և աշխատակազմը ▪ Ընդհանուր հասարակությունը/բոլոր քաղաքացիները/ թվային ծառայություններից հնարավոր օգտվողները 	<ul style="list-style-type: none"> ▪ Ծրագրի իրականացմանը ներգրավվող խորհրդատուները ▪ SS համայնքը (օր.՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (EIF), Առաջադեմ տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (USՁՄ), Երևանի ՏՀՏ գործատուների միությունը, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ), «Ինֆաքթ հաբ Երևան»-ը և այլն), ▪ Լրատվամիջոցները

4. Շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդաբանություն

4.1 Հիմնական սկզբունքներ

4.1 Լավագույն փորձից բխող մոտեցումներին համապատասխանելու համար, ծրագրով կկիրառվեն շահագրգիռ կողմերի ներգրավման հետևյալ սկզբունքները.

4.1.1 *հրապարակայնության և կենսափուլի մոտեցում*. շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքները կկազմակերպվեն ողջ կենսափուլում, կիրականացվեն հրապարակային եղանակով, արտաքին շահարկումներից, միջամտություններից, հարկադրանքից կամ վախեցնելուց զերծ կլինեն.

4.1.2 *իրագրելված մասնակցություն և հետադարձ կապ.* տեղեկատվությունը կտրամադրվի և լայնորեն կտարածվի բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում՝ համապատասխան լեզվով (հայերեն) և ձևաչափով. հնարավորություններ են ապահովվում շահագրգիռ կողմերի կարծիքները հաղորդելու, մեկնաբանություններին, առաջարկություններին և մտահոգություններին արձագանքելու համար.

4.1.3 *ներառականություն և զգայունություն.* շահագրգիռ կողմերի նույնականացումը ձեռնարկվում է ավելի լավ հաղորդակցությանն օժանդակելու և արդյունավետ հարաբերությունների կառուցման համար: Ծրագրերին մասնակցության գործընթացը ներառական է: Բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը խորհրդակցական և քննարկման գործընթացին խրախուսվում է, որքանով, որ ներկա պայմանները թույլ են տալիս: Բոլոր շահագրգիռ կողմերի համար տեղեկատվության հավասար հասանելիություն կապահովվի:

4.2 Ծրագրի շահագրգիռ կողմերի կարիքների ամփոփում ու շահագրգիռ կողմերի ներգրավման մեթոդներ, գործիքներ ու եղանակներ

4.2 Շահագրգիռ կողմերի բարձր ներգրավվածությունը ծրագրի արդյունավետության նախապայմանն է: Շահագրգիռ կողմերի ներգրավման երեք ընդհանուր ուղղությունները կիրականացվեն հետևյալ ձևով.

4.2.1 Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ և կարծիքների հավաքում ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում.

4.2.2 Իրագրելության բարձրացման աշխատանքներ՝ ծրագրի աշխատանքների և դրա առաջընթացի վերաբերյալ.

4.2.3 Ծրագրի հետ կապված աշխատանքներին խոցելի խմբերի ներգրավում՝ հաշվի առնելով նրանց կարիքները:

4.3 Ընդհանուր առմամբ առաջարկվում են շահագրգիռ կողմերի ներգրավման հետևյալ աշխատանքները.

4.3.1 Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ և կարծիքների հավաքում

- Հեռախոսով/էլ. փոստով և անհատական հանդիպումների միջոցով հաղորդակցություն.ՎԳ/ԾԿԻՄ կանոնավոր կապ կպահպանի շահագրգիռ տարբեր պետական կառավարման մարմինների հետ՝ ծրագրի հետ կապված աշխատանքների վերաբերյալ կարծիքներ ներկայացնելու, տրամադրելու և հավաքելու համար: Այս շփումները կիրականացվեն հեռախոսազանգերի, էլ. նամակագրության, առցանց հարթակների կամ անհատական հանդիպումների միջոցով: Այլ շահագրգիռ կողմերին վերաբերող համապատասխան փաստաթղթերը, օրինակ՝ տեխնիկական առաջադրանքները, նախագծային տարբերակով շրջանառվել են համապատասխան շահագրգիռ կողմերի շրջանում, իսկ վերջնական փաստաթղթերը՝ նրանց հետ համագործակցության

և մեկնաբանությունների ստացման համար, փաստաթղթերի հետագա բարելավման նպատակով:

- Պաշտոնական հանդիպումներ, կյոթ սեղան-քննարկումներ և ֆորումներ. Նախքան ծրագրի մեկնարկը և ողջ փուլի ընթացքում, ԾԿԽ պաշտոնական հանդիպումներ կկազմակերպի ծրագրի շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նշված է վերը՝ Աղյուսակ I-ում: Հանդիպումները կարող են կազմակերպվել ֆիզիկապես կամ առցանց հարթակների միջոցով: Մշտադիտարկման և գնահատման (Մ և Գ) խորհրդատվական ընկերությունը պատասխանատու կլինի հաշվետու յուրաքանչյուր տարի ծրագրի շահագրգիռ կողմերի հետ առնվազն մեկ կյոթ սեղան-քննարկում և/կամ ֆորում կազմակերպելու համար (Մ և Գ խորհրդատվական ընկերության պարտականությունների մասին ավելի հանգամանորեն տե՛ս բաժին 7-ում՝ «Շահագրգիռ կողմերի ներգրավվածության աշխատանքների իրականացման ռեսուրսներ և պարտականություններ»):
- Հարցման և Մ և Գ կարծիքի հավաքման գործիքներ: Ծրագրով կֆինանսավորվեն հարկ վճարողների գոհունակության կանոնավոր տարեկան հարցումները՝ հարկ վճարողների սեզմենտների լայն շրջանակից ծառայությունների մասով նրանց փորձի վերաբերյալ անկախ կարծիքի ստացումը խթանելու համար, հատկապես ներառելով խոցելի խմբերին (օր.՝ հաշմանդամներին և տարեցներին): Հարցումներով կգնահատվի քաղաքացիների գոհունակության մակարդակը, հարկ վճարող-հարկային պաշտոնյա շփումների որակը, բիզնեսի և քաղաքացիների առջև ծառայած մարտահրավերները և ծառայությունների բարելավման վերաբերյալ առաջարկությունները: Ծրագրի միջոցով ֆինանսավորված համապատասխան միջամտությունները համապատասխանաբար կլրամշակվեն կամ կճշգրտվեն: Հարցման արդյունքները կիրառարակվեն կամ հրապարակային կքննարկվեն: Բացի այդ, ելակետային, միջնաժամկետ գնահատականների և ծրագրի վերջնական գնահատման համար, Մ և Գ կկիրառի շահագրգիռ կողմերի ներգրավման տարբեր գործիքներ, որոնց նպատակը կարծիքների հավաքումն է, այդ թվում, ի թիվս այլնի, առանցքային տեղեկատուների հարցազրույցները (KIIs), ֆոկուս խմբային քննարկումները (FGDs), շահագրգիռ կողմերի հարցումները, համայնքապետարաններում հանդիպումները և այլն: Մ և Գ խորհրդատուի կողմից կարծիքների հավաքման տարբեր մեխանիզմներով ստացված հետադարձ կապը և պատկերացումները կանոնավոր պարբերականությամբ կտրամադրվեն ԾԿԽ-ին՝ ծրագրային միջամտությունների հետագա բարելավման համար:
- Բողոքների արձագանքման կայացած մեխանիզմ. ԲԱՄ-ը կպահպանվի ծրագրի ողջ կենսափուլի ընթացքում (մանրամասները տե՛ս 5 -րդ՝ «Բողոքների արձագանքման մեխանիզմ» բաժնում):
- Պետական կառավարման համապատասխան մարմինների ուսուցում, և կարողությունների զարգացման աշխատանքներ՝ ներդրված նոր տեխնոլոգիաների և գործիքների մասով. ՎԳ կապահովի, որ պետական կառավարման մարմինների համապատասխան աշխատակիցներին

ներկայացվի և ուսուցանվեն նոր տեխնոլոգիաները և գործիքները: Դա անելու համար ՎԳ/ԾԿԽ-ն տեխնոլոգիաների արդիականացման կամ նոր տեխնոլոգիաների ներդրման համար պատասխանատու խորհրդատվական ընկերությունների տեխնիկական առաջադրանքներում կներառեն իրազեկման բարձրացման և ուսուցման ապահովման պահանջներ: Բացի այդ, ԾԿԽ-ն իրազեկման բարձրացման և ուսուցման լրացուցիչ պահանջներ կնախատեսի պետական կառավարման համապատասխան մարմիններում աշխատող խոցելի խմբերի և /կամ հաշմանդամների համար: Այս պահանջները կարող են ներառել, բայց չսահմանափակվել տարեց աշխատակիցների ուսուցման համար լրացուցիչ ժամերով, հաշմանդամների համար հարմարավետ վայրերում ուսուցման կազմակերպմամբ և այլն:

- Վերջնական սպառող խոցելի խմբերի ներգրավում և կարիքների հաշվի առնում ծրագրերին առնչվող աշխատանքներում. Ծրագրով կապահովվի, որ որպես վերջնական սպառող հանդես եկող խոցելի խմբերի կարիքները մշակվելիք կամ լայն հասարակական օգտագործման համար ներդրվելիք արդյունքների վերջնական նախագծում պաշտած արտացոլում ստանան: Խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքների արձագանքմանն ուղղված լուծումներն ի թիվս այլնի կներառեն վերջնական արդյունքների ֆունկցիոնալ հնարավորությունները ցածր արագությամբ ինտերնետ օգտագործելու դեպքում, ձայնային օգնականի լուծումները կույրերի համար, ազգային փոքրամասնությունների կողմից կիրառվող լեզուներով արդյունքների հասանելիությունը և այլն: ԾԿԽ-ն լայն հանրային օգտագործման տեխնոլոգիաների արդիականացման կամ նոր տեխնոլոգիաների ներդրման համար պատասխանատու խորհրդատվական ընկերությունների տեխնիկական առաջադրանքներում կներառի խոցելի խմբերի առանձնահատուկ կարիքների բացահայտման, գնահատման և արձագանքման պահանջներ: Բացի այդ, Մ և Գ խորհրդատուն (ԾԿԽ-ի համար ՎԳ-ի կողմից ներգրավված) այնուհետև ֆոկուս խմբային քննարկումներ կկազմակերպի խոցելի խմբերի ներկայացուցիչների/ այդ խմբերը ներկայացնող ԲՀԿ-ների հետ՝ իրենց կարիքները հնչեցնելու համար գորեղացնելով խոցելի խմբերին:
- Քաղաքացիներից հետադարձ կապի ստացման արդեն ստեղծված հարթակի կիրառումը: ՊՀԱԾ 3-ի շրջանակում կօգտագործվի www.gnahatir.am տիրույթի ներքո քաղաքացիներից հետադարձ կապի արդեն ստեղծված հարթակը, որը մշակվել էր քաղաքացիներից հետադարձ կապի ստացման հնարավորություն տալու համար, ինչը ծրագրի աշխատանքների համար կարող է տեղեկատվություն ապահովել: Հարթակը խթանում է քաղաքացիների հետ երկխոսությունը՝ նրանց ապահովելով հաղորդակցության արդյունավետ և հարմարավետ ուղով: Հանրային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների կարծիքների ստացման միասնական համակարգը և հեռախոսազանգերի կենտրոնն ակնկալվում է, որ նշանակալիորեն կբարձրացնեն քաղաքացիների ներգրավվածությունը և ծառայություն մատուցողների հաշվետվողականությունը: Սույն հարթակը կօգտագործվի

ՊՀԱԾ 4-ի շրջանակում ծրագրին առնչվող աշխատանքների վերաբերյալ կարծիքների հավաքման համար: Արդյունքների շրջանակում ծրագրով կչափորոշվի քաղաքացիների ներգրավվածությունը և դրա արդյունավետությունը՝ շահատուներից հետադարձ կապի ցուցանիշի միջոցով. ընտրված ծառայություններից քաղաքացիների (ըստ սեռերի առանձնացված) գոհունակության տոկոսային անճ:

4.3.2 Իրազեկման բարձրացման և կարողությունների զարգացման փուլեր

- Ծրագրին առնչվող փաստաթղթերի հրապարակում և/կամ մամուլի հաղորդագրություններ տեղական և ազգային լրատվամիջոցներում. ԾԿԽ կապահովի ծրագրին առնչվող համապատասխան փաստաթղթի և մյուս համապատասխան տեղեկությունները, որոնք ժամանակին հրապարակվում են և հասանելի են հիմնական շահագրգիռ կողմերին և մյուս հետաքրքրված կողմերին (մանրամասները տե՛ս «4.4 Տեղեկատվության հրապարակման առաջարկվող ռազմավարություն» ենթաբաժնում): Ընդհանուր առմամբ աուդիտի հաշվետվությունները, ծրագրի մշտադիտարկման և գնահատման հաշվետվությունները, հանրային ծանուցումները, գնումների ծանուցումները, ծրագրի աշխատանքների վերաբերյալ էլեկտրոնային հրապարակումները և/կամ մամուլի հաղորդագրությունները կտարածվեն www.gov.am կամ այլ ազատ հասանելի կայքերով (օր.՝ www.devbusiness.un.org, www.gnumner.am):
- Պաշտոնական կայքերում և/կամ առցանց մամուլի լրատվական նյութերում և նորություններում և /կամ սոցիալական ցանցերի էջերում հրապարակում: ԾԿԽ-ն կօգտագործի ծրագրի հետ կապված տեղեկատվության, մամուլի հաղորդագրությունների և նորությունների հրապարակման հնարավորությունը տեղական և ազգային լրատվամիջոցներով և/կամ տարբեր սոցիալական ցանցերի էջերով և կամ www.gov.am կայքով կամ այլ ազատ հասանելի կայքերով (օր.՝ www.devbusiness.un.org, www.gnumner.am), այնքանով, որքանով տարբեր լրատվական հարթակները նման տեսակի հնարավորությունները հասանելի են դարձնում:

4.3 Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր

Աղյուսակ 2. Հիմնական շահագրգիռ կողմեր և շահագրգիռ կողմերի ներգրավման առաջարկվող աշխատանքներ

Թիրախային շահագրգիռ կողմեր	Ծրագրի փուլ	Խորհրդակցության թեմա / ուղերձ	Կիրառվող մեթոդ	Իրականացման պատասխանատու
<u>Կառավարման և մարմիններ</u>	Նախապատրաստում Իրականացում	Ծրագրային տեղեկատվություն	Հաղորդակցություն հեռախոսով/էլ	ՎԳ/ՓՎԳ/ԾԿԽ

Թիրախային շահագրգիռ կողմեր	Ծրագրի փուլ	Խորհրդակցության թեմա / ուղերձ	Կիրառվող մեթոդ	Իրականացման պատասխանատու
	Շահագործում	<p>ն՝ շրջանակ, ժամկետ</p> <p>ԲԱՄ</p>	<p>փոստով, անհատական հանդիպումներով, ֆորմալ հանդիպումներով, կլոր սեղան-քննարկումներով և ֆորումներով, բողոքների արձագանքման մեխանիզմ և քաղաքացիներ ից հետադարձ կապի ապահովման հարթակ</p> <p>Իրազեկման բարձրացման, ուսուցման, սեմինարների և կարողությունների զարգացման աշխատանքներ, պետական կառավարման մարմինների համապատասխան աշխատակիցների համար՝ ներդրված նոր տեխնոլոգիաների և գործիքների վերաբերյալ</p>	<p>Ծառայություն մատուցող խորհրդատուներ</p> <p>Մ և Գ խորհրդատու</p>

Թիրախային շահագրգիռ կողմեր	Ծրագրի փուլ	Խորհրդակցության թեմա / ուղերձ	Կիրառվող մեթոդ	Իրականացման պատասխանատու
			Կարծիքների հավաքմանն ուղղված Մ և Գ աշխատանքներ	
<u>Քաղ. հասարակություն, ՏՏ և մասնագիտական համայնք</u>	Նախապատրաստում Իրականացում Շահագործում	Ծրագրային տեղեկատվություն՝ շրջանակ, ժամկետ Շահագրգիռ կողմերի ներգրավման հնարավորություններ, բողոքների մեխանիզմի ընթացակարգ	Ֆորմալ հանդիպումներ, կյոք սեղան-քննարկումներ և ֆորումներ, Ծրագրին առնչվող փաստաթղթերի հրապարակում, բողոքների արձագանքման մեխանիզմ և քաղաքացիներ ից հետադարձ կապի ապահովման հարթակ, հանրային ծանուցումներ Կարծիքների հավաքմանն ուղղված Մ և Գ աշխատանքներ	ՎԳ/ՓՎԳ/ԾԿ Խ Մ և Գ խորհրդատու
<u>Ընդհանուր հասարակություն, այդ թվում՝ խոցելի խմբերը</u>	Նախապատրաստում Իրականացում Շահագործում	Ծրագրային տեղեկատվություն՝ շրջանակ, ժամկետ Շահագրգիռ կողմերի ներգրավման հնարավորություն	Առցանց մամուլում և/կամ պաշտոնական կայքերում և /կամ սոց. ցանցերի էջերում	ՎԳ/ՓՎԳ/ԾԿ Խ Մ և Գ խորհրդատու

Թիրախային շահագրգիռ կողմեր	Ծրագրի փուլ	Խորհրդակցության թեմա / ուղերձ	Կիրառվող մեթոդ	Իրականացման պատասխանատու
		ններ, բողոքների մեխանիզմի ընթացակարգ	<p>Նյութերի հրապարակում Իրազեկման բարձրացման միջոցառումներ , ֆորումներ, կոնֆերանսներ և այլն</p> <p>Բողոքների արձագանքման մեխանիզմ և քաղաքացիներ ից հետադարձ կապի ապահովման հարթակ, հանրային ծանուցումներ</p> <p>Խոցելի խմբերի ներկայացուցիչների կամ նրանց շահերը ներկայացնող ՔՀԿ-ների հետ ֆոկուս խմբային քննարկումներ</p> <p>Կարծիքների հավաքմանն ուղղված Մ և Գ աշխատանքներ</p>	

4.4 Տեղեկատվության հրապարակման առաջարկվող ռազմավարությունը

Ծրագրի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելիս կկիրառվեն հետևյալ սկզբունքները.

- Ծրագիրը կապահովի, որ հրապարակվելիք տեղեկատվությունը լինի հասկանալի և հեշտ հասանելի և շահագրգիռ կողմերի ժամանակին և մատչելի ձևով մատուցվի,
- Տեղեկատվության հրապարակման գործընթացները կնախաձեռնվեն ծրագրի ամենասկզբում և կշարունակվեն իրականացման ողջ շրջանում,
- Տեղեկատվության բազմազան հարթակներ կօգտագործվեն տեղեկատվության հրապարակման համար, այդ թվում, սակայն չսահմանափակվելով պաշտոնական կայքերով/սոց.ցանցերով/լրատվական հարթակներով և այլն:

Տեղեկատվության հրապարակման նախնական ռազմավարությունը ներկայացվում 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3. Տեղեկատվության հրապարակման նախնական ռազմավարություն

Ծրագրի փուլ	Թիրախային շահագրգիռ կողմեր	Հրապարակվելիք տեղեկություններ	Առաջարկվող մեթոդներ և ժամկետներ
Ծրագրի իրականացման համար նախապատրաստական աշխատանքներ	Կառավարման մարմինները (ՓՎ գրասենյակ, ԷԿԵՆԳ, ԱՆ, Ոստիկանությունը և այլն), այս ոլորտում աշխատող այլ դոնոր կազմակերպությունները, այլ շահագրգիռ կողմերը	Ծրագրի նպատակը և ընդգրկումը, ՇԿՆԾ, ԲԱՄ ընթացակարգը, ծրագրի մշակման վերաբերյալ թարմ տեղեկությունները	www.gov.am կայքով /հանրային ծանուցումներով տեղեկատվության տարածում և էլ. հրապարակումներ անցանց կայքերով/սոց.ցանցերի /մամուլի հաղորդագրություններով/ անմիջական էլ. նամակներ
Ծրագրի իրականացման փուլ	Կառավարման մարմինները (ՓՎ գրասենյակ, ԷԿԵՆԳ, ԱՆ, Ոստիկանություն և այլն), ոլորտում աշխատող այլ դոնոր կազմակերպությունները , այլ շահագրգիռ կողմերը, խորհրդատվական հնարավոր ընկերությունները,	Ծրագրի նպատակը և ընդգրկումը, ՇԿՆԾ, ԲԱՄ ընթացակարգը, ծրագրի զարգացման վերաբերյալ թարմ տեղեկությունները Մրցութային հնարավորությունները	www.gov.am կայքի/ հանրային ծանուցումների միջոցով տեղեկատվության տարածում, անցանց կայքերի/սոց. ցանցերի/մամուլի հաղորդագրություններ ի միջոցով էլեկտրոնային հրապարակումներ,

Ծրագրի փուլ	Թիրախային շահագրգիռ կողմեր	Հրապարակվելիք տեղեկություններ	Առաջարկվող մեթոդներ և ժամկետներ
	ընդհանուր հասարակությունը	Ծրագրի առաջընթացը և ձեռքբերումները	անմիջական էլեկտրոնային նամակներ www.procurement.am/ UNDB առցանց կայք (կայքեր) (www.gnumner.am , www.devbusiness.un.org և այլն)
Ծրագրի ավարտ և փակում	Կառավարման մարմինները (ՓՎ գրասենյակը, ԷԿԵՆԳ, ԱՆ, Ոստիկանությունը և այլն), ոլորտում աշխատող այլ դոնոր կազմակերպությունները , այլ շահագրգիռ կողմերը, խորհրդատվական հնարավոր ընկերությունները, ընդհանուր հասարակությունը	Ընթացքի մասին հաշվետվությունները, ԲԱՄ զեկույցները, ՇԿՆԾ մշտադիտարկման հաշվետվությունը, ծրագրի մշտադիտարկման և գնահատման հաշվետվությունները, աուդիտի հաշվետվությունները	www.gov.am կայքի/ հանրային ծանուցումների միջոցով տեղեկատվության տարածում, առցանց կայքերի/սոց. ցանցերի/մամուլի հաղորդագրություններ ի միջոցով էլեկտրոնային հրապարակումներ, ըստ անհրաժեշտության՝ անմիջական էլեկտրոնային նամակներ: Ծրագրին վերաբերող փաստաթղթերի, օր.՝ աուդիտի հաշվետվությունների հրապարակում www.gov.am կայքում:

5. Բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ)

5.1 Ընդհանուր սկզբունքներ

5.1 ԲԱՄ-ի հիմնական նպատակը ժամանակին, արդյունքային և արդյունավետ եղանակով գանգատների և բողոքների կարգավորումն է, որը բավարարում է ներգրավված բոլոր կողմերին: Հնարավոր գանգատների վաղ բացահայտումն ու ըմբռնումը կարող է օգնել ծրագրի աշխատանքների հետագա բարելավմանը: ԲԱՄ-ը կապահովի, որ ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերն ունենան ծրագրի իրականացմանը ներգրավվելու, մտահոգությունները և բողոքները բարձրացնելու և ծրագրի աշխատանքների վերաբերյալ ԾԿԽ-ին գործնական առաջարկություններ/կարծիք ներկայացնելու միջոց, ինչն էլ նրանց ավելի հաշվետու, թափանցիկ և արձագանքող լինելու հնարավորություն կտա:

5.2 ԲԱՄ-ում ներկայացված են հետևյալ առանցքային սկզբունքները. 1) բողոքներին կցուցաբերվի գաղտնիության մոտեցում, դրանք անկողմնակալ ձևով կգնահատվեն և դրանց կարգավորումը թափանցիկ կլինի. 2) ծրագրի շահառուները կարող են կապի հաստատման մի շարք տարբերակներից օգտվել (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե և փոստային հասցե և այլն): ԲԱՄ-ը հասանելի է բոլոր շահագրգիռ կողմերին. 3) ԲԱՄ-ը նախատեսված է գանգատարկուների կարիքներին արձագանքելու համար. 4) բոլոր բողոքները, պարզ, թե բարդ, հնարավորինս շուտ արձագանք կստանան և կկարգավորվեն: Բողոքի ուղղությամբ ձեռնարկվող գործողությունը կլինի արագ, որոշիչ և կառուցողական. 5) ԲԱՄ-ը ներառում է կարգ և նպատակային իրազեկում սեռական շահագործմանը և չարաշահումներին և սեռական ոտնձգություններին (SEA/SH) վերաբերող բողոքներով զբաղվող համապատասխան բոլոր աշխատողների համար, դրանց անվտանգ և գաղտնի վարման վերաբերյալ:

5.3 ԲԱՄ գործարկման միջոցով հավաքված տվյալները կօգտագործվեն ոչ միայն ծրագրի իրականացման ընթացքում բարձրացված գանգատներին և բողոքներին արձագանքելու համար, այլ նաև կնպաստեն միտումների և քաղած դասերի ուսումնասիրության միջոցով ծրագրի արդյունավետության բարձրացմանը:

5.4 ԾԿԽ-ն կհիմնվի արդեն առկա ԲԱՄ մեխանիզմի վրա, որը գործում է Վարչապետի գրասենյակի ենթակայությամբ և կառավարվում Քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության կողմից: Բողոքների մուտքագրումը կիրականացվի www.e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով, որը գործարկվում է Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) կողմից: Առկա մեխանիզմը արձագանքում է քաղաքացիների բոլոր տեսակի խնդիրներին՝ ինչպես ծրագրի վերաբերյալ կարծիքներին, այնպես էլ ուղղակիորեն ծրագրին վերաբերող բողոքներին՝ ուղղված ԾԿԽ-ին: Քաղաքացիների խնդիրների և բողոքների կարգավորման վերաբերյալ տվյալները հավաքվում են ավելի բարձր հաշվետվողականությունը և արձագանքման ունակությունը խթանելու համար: ԾԿԽ պատասխանատու է հավաստիանալու համար, որ բողոքների արձագանքման մեխանիզմը պատշաճ ձևով գովազդվի, որ ծրագրին առնչվող բոլոր բողոքներին պատասխան և արձագանք տրվի հաստատված ժամկետում և որ բոլոր բողոքները հետևողականորեն գրանցվեն:

5.2 Մուտքագրում և գրանցում

5.5 ԲԱՄ –ի համակարգողը Ծրագրի ղեկավարն է, ով պատասխանատու է բոլոր բողոքների ստացման, ստուգման, գրանցման և փաստաթղթերում արձանագրման համար:

5.6 Ծրագրի հետ կապված աշխատանքներից դժգոհ շահագրգիռ կողմերը և շահառուները գործընթացի ցանկացած փուլում կարող են իրենց կարծիքը ներկայացնել կամ իրենց բողոքները փոխանցել: Բողոքների մուտքագրման բազմաթիվ ուղիներ կան: Քաղաքացիները կարող են իրենց դիմումը կամ գանգատը ներկայացնել www.e-request.am էլեկտրոնային հարթակով, դեպքին հետևել և համապատասխան պաշտոնյայի հետ հանդիպման համար դիմել: Նաև առանձնացված էլ.փոստի հասցե՝ hotline@gov.am և հեռախոսահամարներ կան՝ 1-17(գանգերն անվճար են) և +374 (10) 527-000 (արտասահմանյան գանգերի համար):

5.7 Ծրագրի ղեկավարը կստուգի նաև ծրագրի ընդհանուր էլ. փոստը՝ info@psmp.am, և էլ. փոստի այդ հասցեով ստացված ցանկացած բողոք և հետադարձ կարծիք կգրանցվի ԲԱՄ մատյանում և ծրագրի ԲԱՄ ընթացակարգի համաձայն ընթացք կտրվի:

5.8 Տեղերում համակարգողներ կնշանակվեն Ծրագրի իրականացման ընթացակարգում ընդգրկված պետական կառավարման մարմիններում (ԱՆ, ՊԵԿ, Ֆինանսների նախարարություն, Ոստիկանություն և այլն) բողոքներն ընդունելու, ընթացք տալու և դրանք ԾԿԽ-ին փոխանցելու համար:

5.9 Տեղերում համակարգողների միջոցով կամ այլ ճանապարհով ստացված բողոքները, օր.պետական կառավարման այլ մարմինների, ՀԲ-ի, ՔՀԿ-ների և այլն միջոցով փոխանցված, հավասարապես կգրանցվեն բողոքների մատյանում և ծրագրի ԲԱՄ ընթացակարգի համաձայն ընթացք կստանան:

5.3 Բողոքների ուսումնասիրություն, քննություն ու կարգավորում

5.10 Թեև Վարչապետի գրասենյակը բողոքներ է ստանում կառավարությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, ծրագրին վերաբերող բողոքները կփոխանցվեն ԾԿԽ-ին: Անանուն հետադարձ կապը և գանգատները ևս գրանցվում և ուսումնասիրվում են այնքանով, որքանով դրանցով իրավաչափ մտահոգություն է բարձրացվում՝ կապված ծրագրի աշխատանքների հետ:

5.11 Անհրաժեշտությունից ելնելով՝ ծրագրի թիմի մյուս անդամները կարող են ներգրավվել ուսումնասիրման գործընթացում՝ վերջնական որոշում կայացնելու հարցում Ծրագրի ղեկավարին օգնելու համար: Դեպքերի ուսումնասիրությունը չի կարող գրանցումից հետո 5 աշխատանքային օրից ավելի տևել:

5.12 Բոլոր գանգատարկուների հետ անհրաժեշտ է կապ հաստատել դեպքի ներկայացումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ վերջնական պատասխանի/կարգավորման կամ դեպքի կարգավիճակի մասին տեղեկացնելու համար: ԾԿԽ կկազմի պատասխանը, որը կտրվի Վարչապետի գրասենյակի կողմից: Հատուկ դեպքերում, երբ հինգ աշխատանքային

օրվա ընթացքում կարգավորում չի կարող տրվել (երբ ավելի շատ ժամանակ անհրաժեշտ կլինի լրացուցիչ տեղեկությունների և շահագրգիռ այլ կողմերի ներգրավման համար), գանգատարկուները կտեղեկացվեն դեպքի համար անհրաժեշտ լրացուցիչ ժամանակի մասին, ինը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն չի կարող մեկ ամսից երկար լինել:

5.13 Պատասխանները կարող են լինել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր՝ կախված նրանից, թե բողոքը բանավոր, թե՛ գրավոր է ստացվել: Անկախ ձևից, գանգատարկու և պատասխանը պետք է գրանցվեն: Պատասխանն առնվազն պետք է ներառի հետևյալ տեղեկությունները. ա) գանգատի ընդունումը կամ մերժումը, բ) մերժման դեպքում՝ մերժման պատճառները և հնարավոր է գործի փոխանցումը, եթե կա, գ) ընդունման դեպքում՝ հաջորդ քայլերը և կարգավորման ժամկետները:

5.14 Ընթացիկ ծրագրի շրջանակում բողոքների կարգավորման հնարավոր մոտեցումները կարող են ներառել. ա) ավանդական կառույցների կամ կառավարական կազմակերպությունների միջոցով միջնորդությունը, բ) ուղղակի բանակցությունները և երկխոսությունը դիմումատուի և համապատասխան գործակալության կամ գործակալությունների միջև, գ) երրորդ կողմի միջոցով կազմակերպված բանակցությունները, դ) բողոքի քննություն փաստաթղթերի ուսումնասիրությունը, տեղում քննության և/կամ տարբեր կողմերի հարցազրույցների միջոցով, ե) փոխանցումը այլ դատական և վարչական գործընթացների: Բողոքի (բողոքների) բնույթից և լրջությունից կախված՝ ՊՀԱԾ ծրագրի ղեկավարը, ծրագրի թիմի հետ խորհրդակցելով, պետք է բացահայտի և որոշի, թե բողոքի կարգավորմանը մոտեցումը ո՞րը կլինի:

5.4 ԲԱՄ մատյան

5.15 ՊՀԱԾ ծրագրի ղեկավարը կվարի ԲԱՄ մատյանն (SS վրա հիմնված կամ ձեռքով): Որևէ ճանապարհով ստացված բողոքը պետք է գրանցվի բողոքների մատյանում կամ բողոքների «excel» ձևաչափի աղյուսակում կամ բողոքների տվյալների շտեմարանում: Բողոքների մատյանում միանշանակ կնշվեն ստացված հարցի/բողոքի/կարծիքի ամփոփումը, ամսաթիվը և անունը/գանգատարկուի կոնտակտային տվյալները, եթե կան, պատասխանի ամսաթիվը, կարգավորման կարգավիճակը և հաջորդ քայլերը կամ սպասվող գործողությունները:

5.5 Բողոքների փակումն ու հետագա ընթացքը

5.16 Բողոքը փակվում է, երբ որևէ հետագա գործողություն չի կարող ձեռնարկվել կամ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա: Բողոքը չի կարող փակվել մինչև պատասխանի չհաղորդվի և չհաստատվի Գանգատարկուի կողմից: Եթե Գանգատարկուին արդյունքը բավարարում է, բողոքը փակվում և Բողոքների գրանցամատյանում որպես կարգավորված դեպք է գրանցվում:

5.17 ԲԱՄ –ը գանգատարկման գործընթաց կապահովի, եթե գանգատարկուին չի բավարարում առաջարկված կարգավորումը: Երբ բողոքի կարգավորման բոլոր հնարավոր միջոցներն առաջարկվել են և գանգատարկուն դեռևս չի բավարարվում, նրան անհրաժեշտ է տեղեկացնել դատարան դիմելու նրա իրավունքի մասին:

5.18 Եթե գանգատարկուն մերժում կամ նույն պահանջով երկու անգամ գանգատարկում է ներկայացնում, բողոքի փակման կարգավիճակը գրանցվում և բողոքների տվյալների շտեմարանում մուտքագրվում է որպես չկարգավորված: Բողոքը կարող է փակվել նաև այն դեպքում, երբ գանգատարկուի հետ կապ հաստատելու փորձերը պաշտոնական բողոքը ստանալուն հաջորդած 30 օրվա ընթացքում հաջողության չեն հասել: Այս դեպքերը գրանցվում են որպես հրաժարման դեպքեր:

5.19 Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, ծրագրի ազդակիր մարդիկ կարող են ցանկացած փուլում դիմել դատարան: Դատական գործի բացում նշանակում է ծրագրի ԲԱՄ համակարգի շրջանակում բողոքին առնչվող բոլոր գործողությունների դադարեցում: Գործը բացելուց հետո միայն Դատարանի կայացրած որոշումներն են պարտադիր թե՛ դիմումատուի և թե՛ ծրագրի համար:

5.6 Սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգության խնդիրների (SEA/SH) կարգավորում

5.20 Ծրագրի աշխատանքների SEA/SH ռիսկը ուսումնասիրվել և ցածր է գնահատվել: ԲԱՄ-ը SEA/SH բողոքները ստանալու և կարգավորելու առումով զգայուն կլինի՝ սահմանելով գաղտնի հաղորդումների ներկայացման մեխանիզմներ՝ սեռով պայմանավորված բռնության հարցերի անվտանգ և էթիկական փաստաթղթավորման համար: Բացի այդ, ԲԱՄ-ը կունենան նաև Համաշխարհային բանկին սեռով պայմանավորված ցանկացած բողոքների մասին անմիջապես ծանուցելու գործընթացներ՝ դրանք վերապրածների համաձայնությամբ, նրանց գաղտնիությունը խստորեն պահպանելով:

5.7 ԲԱՄ-ի մասին ծրագրի շահագրգիռ կողմերին տեղեկացնելը

5.21 Հետադարձ կապը և ԲԱՄ տեղեկությունները կհաղորդվեն բոլոր շահագրգիռ կողմերին՝ հանրային լսում-հանդիպումներ, կլոր սեղան-քննարկումներ և այլ ծրագրերի միջոցառումներ: Ծրագրի հետ կապված բոլոր տպագիր նյութերը, ինչպիսիք են բրոշյուրները, գրքույկները, պաստառները (առկայության դեպքում), նաև տեղեկություններ կներկայացնի ԲԱՄ-ի վերաբերյալ, այդ թվում՝ պայմանագրային տեղեկություններ՝ հետադարձ կապ կամ բողոքներ ներկայացնելու համար: Հետադարձ կապը և ԲԱՄ-ի հետ կապված տեղեկությունները կտարածվեն նաև ծրագրի բոլոր հրապարակված փաստաթղթերի և մամուլի հաղորդագրությունների միջոցով:

6. ՇԿՆԾ մշտադիտարկում ու զեկուցում

6.1 Շահագրգիռ կողմերի ներգրավման սույն ծրագիրը պարբերաբար կվերանայվի, կթարմացվի և կբարելավվի՝ ապահովելու, որ նրանում ներկայացվեն հետևողական և ամենավերջին տեղեկությունները, ինչպես նաև այն, որ շահագրգիռ կողմերի ներգրավման առանձնացված մեթոդները լինեն արդյունավետ և առկա իրավիճակին և համատեքստին համապատասխան: ՇԿՆԾ կթարմացվի՝ ծրագրին առնչվող աշխատանքների և

ժամանակացույցի ցանկացած էական փոփոխություններն արտացոլելու համար, եթե այդպիսիք լինեն:

6.2 Սույն ՇԿՆԾ շրջանակում իրականացվող աշխատանքները ենթակա են մշտադիտարկման և գնահատման (Մ և Գ): Շահագրգիռ կողմերի ներգրավման բոլոր աշխատանքները հետևվելու և փաստաթղթավորվելու են, իսկ շահագրգիռ կողմերի ներգրավման արդյունքներն արտացոլվելու ԾԿԻ կողմից՝ Համաշխարհային բանկին ներկայացվող առաջընթացի հաշվետվություններում: Շահագրգիռ կողմերի ներգրավման ներքին աշխատանքներն իրականացվելու են ԾԿԻ-ի կողմից:

6.3 Ծրագրի բողոքների մեխանիզմի միջոցով ստացված հետադարձ կապը և բողոքները կներկայացվեն և կներառվեն առաջընթացի հաշվետվություններում: Ամփոփումները և ներքին հաշվետվությունները կարտացոլեն արդի տեղեկությունները հաշվետու ժամանակահատվածում շահագրգիռ կողմերի ներգրավվածության վերաբերյալ (օր.՝ ամսական, եռամսյակային կամ տարեկան), հետևյալ ձևով.

6.3.1 Շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների վերաբերյալ տեղեկությունները, այդ թվում՝ խորհրդակցական հանդիպումներ, կլոր սեղան-քննարկումներ, ֆորումներ և այլն, մասնակիցների, հրապարակված լրատվական նյութերի թիվը/ տեղական, մարզային և հանրապետական լրատվամիջոցների հեռարձակմամբ կամ Կառավարության պաշտոնական հարթակով և այլն.

6.3.2 Առցանց հարթակների գործարկման մասին տեղեկություններ, այդ թվում՝ տեղեկություններ հրապարակված փաստաթղթերի, կայքեր այցելի թվի, ստացված կարծիքների թվի և այլն վերաբերյալ.

6.3.3 ԲԱՄ-ին վերաբերող տեղեկություններ, այդ թվում՝ բողոքների թիվը և բնույթը և ստացված հայտերը, արձագանք ստացած բողոքների թիվը, բողոքների կարգավորման միջին ժամանակը և այլն:

6.4 ՇԿՆԾ իրականացման ընթացքը կփաստաթղթավորվի առաջընթացի տարեկան զեկույցներում, որոնք կտրամադրվեն Համաշխարհային բանկին:

7. Շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների իրականացման ռեսուրսները և պարտականությունները

7.1 Գեկավարության գործառույթները և պարտականությունները

7.1 ԾԿԻ գլխավորում է Ծրագրի ղեկավարը, իսկ խմբի կազմում գնումների, ֆինանսական կառավարման և մասնագիտացված ՏՏ աշխատակիցներն են (ԾԿԻ կառուցվածքը դեռ նախնական է): ԾԿԻ-ն պատասխանատու կլինի ծրագրի իրականացման և վերահսկողության ու շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների համար: ԾԿԻ ծրագրի ղեկավարը շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների իրականացման, դրանց մշտադիտարկման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների համակարգողն ու պատասխանատուն կլինի:

7.2 Ընդհանուր առմամբ ԾԿԻ պատասխանատու է վերոբերյալ աղյուսակում (աղյուսակ 2) հանգամանորեն ներկայացված ՇԿՆԾ-ի աշխատանքների իրականացման և նշված

փաստաթղթում սահմանված ժամկետների պահպանման համար: ԾԿԽ-ն ընդհանուր պատասխանատվություն կկրի Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի (ՇԿՆԾ) թարմացման, ընդունման և իրականացման, այդ թվում՝ ներգրավման տարբեր մեխանիզմների, դրանց նախնական ժամկետների, դերերի և պարտականությունների ու ՇԿՆԾ իրականացման համար հատկացվող ռեսուրսների համար:

7.3 Քանի որ ՇԿՆԾ աշխատանքների աղյուսակում ներկայացված բոլոր աշխատանքների իրականացման համար ԾԿԽ-ի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, ԾԿԽ-ն իր որոշ պարտականությունները կպատվիրակի ծրագրի մշտադիտարկում և գնահատում (Մ և Գ) իրականացնող խորհրդատվական ընկերությանը, որը ներգրավվում է ծրագրի ամենասկզբից և ընդհանուր առմամբ պատասխանատու է ելակետային և միջնաժամկետ տարեկան գնահատումների, ինչպես նաև ծրագրի վերջնական գնահատման համար:

7.4 ԾԿԽ-ն կապահովի, որ ՇԿՆԾ իրականացման համապատասխան բոլոր պահանջներն արտացոլվեն Մ և Գ խորհրդատուի ներգրավման համար մշակված տեխնիկական առաջադրանքում: Գնումների փուլում ԾԿԽ-ն կապահովի, որ Խորհրդատուն շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների նախագծման, իրականացման և փաստաթղթերում արձանագրման բավարար և համապատասխան փորձ ունենա: Այն կարող է ներառել, բայց չսահմանափակվել տեղեկատվական հստակ և հասանելի տեղեկատվական նյութերի նախապատրաստմամբ, ՇԿՆԾ-ում մանրամասնեցված բոլոր տեսակի միջոցառումների կազմակերպմամբ, խորհրդակցական գործընթացի արդյունքների գրանցմամբ և փաստաթղթերում արձանագրմամբ և շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների վերաբերյալ մանրամասն զեկույցի կազմմամբ և այլն:

7.5 Ընդհանուր առմամբ ԾԿԽ-ն պատասխանատու կլինի Խորհրդատվական ընկերությանը պատվիրակված ՇԿՆԾ աշխատանքների վերահսկողության և որակի ապահովման համար: Խորհրդատվական ընկերությունը շահագրգիռ կողմերի ներգրավման համապատասխան աշխատանքների ընթացքի մասին կզեկույցի ԾԿԽ-ին և Բանկին ներկայացվող տարեկան հաշվետվությունների միջոցով: Խորհրդատվական ընկերության կողմից իրականացվող ՇԿՆԾ աշխատանքների մշտադիտարկումը և դրանց վերաբերյալ զեկույցումը պետք է համապատասխանի սույն ՇԿՆԾ «5. ՇԿՆԾ մշտադիտարկումը և զեկույցումը» բաժնի պահանջներին:

7.2 Ռեսուրսներ

7.6 Սույն փաստաթղթում նկարագրված շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքները ծրագրի իրականացման առանցքային մասն են: ՇԿՆԾ իրականացման համար պահանջվող ֆինանսական ռեսուրսները կընդգրկվեն ՊՀԱԾԿ-ի 4-րդ բաղադրիչում (Ծրագրի կառավարում): Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի աշխատանքների իրականացման համար ծրագրի բյուջեում կավելացվի բյուջետային տող:

7.7 Շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների իրականացումը ԾԿԽ աշխատակիցների աշխատանքային պարտավորությունների կարևոր մասերից մեկն է և ՇԿՆԾ շրջանակում շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների համակարգման համար փոխհատուցման լրացուցիչ տողեր չեն նախատեսվի:

7.8 Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակում ֆինանսավորվելիք աշխատանքները կներառեն խորհրդակցական հանդիպումների և կլոր սեղան-քննարկումների կազմակերպումը (սրահների, փոխադրամիջոցների վարձակալություն, սուրճի ընդմիջումներ և այլն), տպագիր նյութերի մշակումը (տեղեկատվական թերթիկներ, գրքույկներ, պաստառներ և այլն) և խորհրդատուների աշխատավարձը և այլն: Քանի որ շահագրգիռ կողմերի ներգրավման հիմնական աշխատանքներն իրականացվելու են խորհրդատվական ընկերությունների միջոցով, ՇԿՆԾ իրականացման համապատասխան բյուջեն կկազմվի ծրագրի իրականացման ընթացքում, Խորհրդատուների կողմից ստացված՝ ՇԿՆԾ իրականացման հետ կապված տողերն ընդգրկող առաջարկների հիման վրա:

7.9 Ըստ գնահատականների՝ ՇԿՆԾ իրականացման համար անհրաժեշտ բյուջեն կկազմի մոտավորապես 30 000 դոլար, որը ներառում է ծրագրի շահագրգիռ կողմերի հետ յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում առնվազն մեկ կլոր սեղան-քննարկման և /կամ ֆորումի կազմակերպման (պետք է կազմակերպվի Մ և Գ խորհրդատուի կողմից), անհրաժեշտության դեպքում ԾԿԻՄ-ի կողմից տարբեր շահագրգիռ կողմերի հետ ֆորմալ հանդիպումների կազմակերպման (տարածքի վարձակալության, սուրճի ընդմիջումների), տեղեկատվական թերթիկների և բրոշյուրների (ըստ անհրաժեշտության) կազմման և տարածման ծախսերը, շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքների մշտադիտարկման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված ծախսերը (Մ և Գ խորհրդատվական ընկերության բյուջեի մաս կկազմեն) (աղյուսակ 4):

Աղյուսակ 4. ՇԿՆԾ իրականացման համար անհրաժեշտ բյուջեի մոտավոր նախահաշիվն ըստ յուրաքանչյուր ֆինանսական տարվա

Բյուջեի տողեր	ՖՏ202 2	ՖՏ202 3	ՖՏ202 4	ՖՏ202 5	ՖՏ202 6	ՖՏ202 7	Ընդամեն ը
1. Կլոր սեղան - քննարկումների և /կամ ֆորումների կազմակերպում ծրագրի շահագրգիռ կողմերի հետ, անհրաժեշտության դեպքում պաշտոնական հանդիպումների կազմակերպում շահագրգիռ կողմերի հետ (տարածք, փոխադրում, սուրճի ընդմիջումներ)	\$3500	\$3500	\$3500	\$3500	\$2500	\$2500	\$19000

2.Տեղեկատվական թերթիկների և բրոշյուրների կազմում և տարածում	\$700	\$700	\$700	\$700	\$700	\$1500	\$5000
3. ՇԿՆԾ իրականացման մշտադիտարկում և հաշվետվությունների ներկայացում	\$700	\$700	\$700	\$700	\$700	\$1000	\$4500
Ընդամենը	\$4,900	\$4,900	\$4,900	\$4,900	\$3,900	\$5,000	\$28,500

7.10 ՇԿՆԾ շարունակաբար կթարմացվի ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

8. ՇԿՆԾ իրականացման ռիսկեր

8.1 Շահագրգիռ կողմերի ներգրավումը կարևոր է այս ծրագրի համար և ներկա իրավիճակից ելնելով՝ դրան առնչվող ռիսկերը ցածր են: ՇԿՆԾ իրականացման հետ կապված ընդհանուր ռիսկերը կարող են պայմանավորված լինել տեղեկությունների և բոլոր շահագրգիռ կողմերի խմբերի ներգրավման անբավարարությամբ՝ պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակի պարտադրած սահմանափակումներով: ՇԿՆԾ իրականացման հիմնական մոտեցումները և մեխանիզմը մեծապես կախված են երկրում ՔՈՎԻԴ-19 իրավիճակից և կարանտինի սահմանված ռեժիմից:

8.2 Ներկայումս ՔՈՎԻԴ-19 սահմանափակումներն աստիճանաբար վերացվում են՝ բնակչության առաջ ընթացող պատվաստումներին համապատասխան: Սակայն եթե ապագա իրավիճակը պահանջի, կարող է խորհրդակցությունները շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը կարանտինի սահմանված ռեժիմին համապատասխան կառավարելու համար այլընտրանքային եղանակների ընդունման անհրաժեշտություն առաջանալ՝ վարակի փոխանցումը կանխարգելելու համար: Շահագրգիռ կողմերի ներգրավման համար կիրառվելիք այս այլընտրանքային մոտեցումներից կարող են լինել փոքր խմբերով խորհրդակցությունների անցկացումը, եթե ավելի փոքր կազմով հանդիպումները թույլատրվեն, ինչպես նաև ողջամիտ ջանքերի գործադրումը հանդիպումներն առցանց անցկացումը (օր.՝ webex, zoom, skype և այլն) հաղորդակցության միջոցների, գրույցի խմբերի, առանձնացված առցանց հարթակների/բջջային հավելվածների բազմազանացումը (օր.՝ Facebook, Twitter, WhatsApp խմբեր, ծրագրի վեբ հղումներ/կայքեր և այլն):

8.3 Առցանց/հեռավար ներգրավվածության գործիքների կիրառումը կարող է նպաստավոր լինել ներառականության տեսանկյունից, քանի որ տարբեր և հեռավոր վայրերում գտնվող ավելի մեծ թվով մարդիկ, այդ թվում՝ սփյուռքից, կկարողանան միանալ և մասնակցել ծրագրի հետ կապված միջոցառումներին: Համապատասխանաբար, ծրագիրը կընդգրկի սոցցանցերի և վեբ հարթակների, ինչպես նաև հեռավար հանդիպումների գործիքներ՝ ծրագրի վերաբերյալ տեղեկությունների տարածման և սեմինարների ու խորհրդակցությունների անցկացման համար:

Եզրափակիչ նշումներ

8.4 ՇԿՆԾ նախագիծը կհրապարակվի, հիմնական շահագրգիռ խմբերի կտրամադրվի հայերեն և անգլերեն լեզուներով և երկրում կքննարկվի: ՇԿՆԾ վերաբերյալ ստացված կարծիքները կներառվեն և կգրանցվեն ՇԿՆԾ վերջնական տարբերակում: ՇԿՆԾ կհրապարակվի և ծրագրի իրականացման ողջ ընթացքում հրապարակայնորեն հասանելի կլինի, ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով: